5668

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«19» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 135 - 25

Նախաձեռնող՝ *«ԳՈՍ» ՓԲԸ*
գ. Լիճք, /Շ/ Մարտունի

Գործունեությունը՝ *Լիճքի գործող ձկնաբուծարանի ընդլայնում*
Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 135 - 25

«19» Դեկտեմբեր **2025թ.**

Լիճքի գործող ձկնաբուծարանի ընդլայնման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԳՈՍ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվություն
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Լիճք բնակավայր

Ներածական մաս. «ԳՈՍ» ՓԲ ընկերության կողմից նախատեսվում է Լիճքի գործող ձկնաբուծարանի ընդլայնման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 13)-րդ կետի բ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Հողամասի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող տարածքների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնապահպանական, գրանցված իրավունքի տեսակը՝ վարձակալություն:

Նկարագրական մաս. Գործող ձկնաբուծարանի տնտեսության տարածքը վարչական տեսակետից գտնվում է Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի վարչական սահմաններում, «Սևան» ազգային պարկի տնտեսական գոտում, բնակավայրից մոտ 200 մ հեռավորության վրա, M10 Սևան-Մարտունի միջպետական ճանապարհի հարևանությամբ, զբաղեցնում է 118.8587 հա մակերեսով տարածք: Ձկնաբուծարանի հեռավորությունը Սևանա լճից կազմում է մոտ 2.2 կմ:

Երկրաձևաբանության (գեոմորֆոլոգիական) տեսակետից ձկնաբուծարանի տարածաշրջանն իրենից ներկայացնում է միջլեռնային գոգավորություն՝ շրջապատված Վարդենիսի և Գեղամա հրաբխային լեռնաշխարհով: Ձկնաբուծարանի տարածքը հանդիսանում է տափաստանային միջին լեռնային (1400-2300 մ.ծ.մ) լանդշաֆտային գոտի:

Գործող ձկնաբուծարանի և հարակից տարածքներում սողանքային երևույթները բացակայում են:

Ձկնաբուծարանի գործունեության տարածքում բնության, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ առկա չեն, Կարմիր գրքերում գրանցված բույսերի և կենդանիների տեսակներ չեն հանդիպում, չկան խոշոր կաթնասունների ըներ/որջեր, չեն հայտնաբերվել սողուններ, երկկենցաղներ:

Ձկնաբուծարանի տարածքի հողային ծածկույթը ներկայացված է ավազուտ անօգտագործելի հողատեսքով:

Ձկնաբուծական տնտեսությունը գործում է դեռևս 1959 թվականից: Ընկերությունը զբաղվում է ծիածանափայլ իշխանի, գեղարքունի և սիբիրյան թառափ ձկնատեսակների բուծմամբ, համապատասխանաբար տարեկան մոտ 95, 0.5 և 0.5 տոննա արտադրողականությամբ:

Ընկերության կողմից նախատեսվում է արտադրական ծավալների ավելացում մինչև 200 տոննա:

Գեղարքունի և սիբիրյան թառափ ձկնատեսակների (0.5 և 0.5 տոննա) արտադրական ծավալների փոփոխում չի նախատեսվում, արտադրական ծավալների ավելացումը նախատեսվում է միայն ծիածանափայլ իշխան ձկնատեսակի համար:

Տարածքը կառուցապատված է, առկա են բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները, ճանապարհներ, գործող և չգործող ավազաններ, մանրաձկան արտադրամասեր՝ ինկուբացիոն սրահով, վարչական շենք, հանգստի սենյակ, ցնցուղարան, զուգարան, պահեստ, պահակակետ, պոմպակայան և այլն: Տարածքը ապահովված է խմելու ջրով, գազով և էլեկտրաէներգիայով:

Տարածքի անկյունային կետերի կոորդինատները ARM WGS-84 համակարգով հետևյալն են՝

N	X	Y
1	8520332.117	4448862.574
2	8520372.516	4448888.492
3	8520410.137	4448912.007
4	8520464.237	4448945.257
5	8520501.653	4448968.685
6	8520535.534	4448990.529
7	8520577.061	4449012.073
8	8520902.463	4449217.061
9	8521829.688	4448452.054
10	8521365.971	4447982.237
11	8521298.804	4447922.176
12	8521284.437	4447909.711
13	8521286.824	4447906.565
14	8521153.168	4447783.144
15	8521150.614	4447786.061
16	8521130.943	4447768.843
17	8521095.652	4447736.869
18	8521084.393	4447726.477
19	8521080.858	4447729.958
20	8521068.104	4447739.102
21	8521051.033	4447754.421
22	8521046.726	4447752.022
23	8521040.234	4447758.554
24	8521031.948	4447766.45
25	8520818.842	4447978.944
26	8520815.864	4447981.838
27	8520828.029	4448002.659
28	8520830.109	4448006.838
29	8520842.75	4448066.56
30	8520814.282	4448089.762
31	8520798.939	4448097.882
32	8520757.895	4448128.348
33	8520744.612	4448133.616
34	8520695.29	4448079.088
35	8520690.874	4448073.444
36	8520662.428	4448102.843
37	8520636.554	4448166.098
38	8520289.466	4448838.884
1	8520332.117	4448862.574

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Ընկերությունը ջրօգտագործումն իրականացնում է (16/01/2025-16/01/2028թթ գործողության ժամկետով) N042-25 ջրօգտագործման թույլտվության պայմաններին համապատասխան՝ Լիճք գետից՝ 450 լ/վրկ և կապտաժավորված աղբյուրից՝ 38.0 լ/վրկ ծախսով: Լճակներում ջուրը շրջանառվելուց հետո հեռացվում է դրենաժային համակարգով Լիճք գետ՝ 486.3 լ/վրկ ծավալով:

Ջրառի և ջրահեռացման կոորդինատների կետերը հետևյալն են.

Լիճք գետ՝

X = 45° 14' 33.6" Y=40° 09' 58.1"

Կապտաժավորված աղբյուր՝

X = 45° 14' 10.5" Y=40° 09' 33.4"

Ջրահեռացում՝

X = 45° 14' 49.5" Y=40° 10' 05.0"

Ընկերությանը տրված ջրօգտագործման թույլտվությամբ կեղտաջրերի մաքրում չի նախատեսվում, համաձայն ջրօգտագործման թույլտվության սահմանված է կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի չափաքանակներ, որոնք ներկայացված են գնահատման հաշվետվությունում:

Ներկայումս ջրավազանների վրա տեղադրված են 18 աէրատորներ, որոնք ապահովում են ջրի շրջապտույտը, ձկնաբուծարանի արտադրական ծավալների ընդլայնման դեպքում կիրականացվեն ևս 40 աէրատորների տեղադրում:

Գործունեության տարածքում նոր կառուցապատում չի նախատեսվում, գոյություն ունեցող 10 ավազաններին կավելացվեն 8 առկա ավազաններ, որոնք այս պահին ցամաքեցված են և նախկինում ծառայել են որպես ձկնաբուծական տնտեսության ավազաններ:

Առկա 10 ավազանները կահավորված են երկաստիճան ձկնարգել ցանցերով, որոնց չափերը կախված են ջրավազանում աճեցվող ձկան չափերից: Ձկնարգել ցանցեր են տեղադրված նաև ջրառի և ջրահեռացման կետերում: Նախատեսվող ավազանները, նույնպես հագեցած կլինեն երկաստիճան ձկնարգել ցանցերով:

Անհրաժեշտ քանակի (մոտ 150000 հատ) մանրաձկան մի մասը գտնվում է, իսկ մնացած մասը աճեցվում է ընկերության մանրաձկան արտադրամասում՝ ինկուբացիոն սրահում: Արտադրական ծավալների ավելացման արդյունքում կավելացվի անհրաժեշտ մանրաձկան ծավալը կհասնի 320000-ի: Մանրաձկից մինչև ապրանքային ձկան աճեցման ցիկլը տևում է 2-3 տարի:

Սատկած մանրաձկան հավաքը կատարվում է յուրանքանչյուր օր՝ պլանային ռեժիմով և ըստ անհրաժեշտության՝ առանց ռեժիմ սահմանելու: Սատկած մանրաձուկը ամենօրյա ռեժիմով հեռացվում է տարածքից և օգտագործվում որպես անասնակեր: Որպես անասնակեր նախատեսված ձկան թափոնների պահումն իրականացվում է հատուկ մակնշված, կափարիչով ամուր փակվող տարաներում և արտադրամասից հեռացումը՝ առնվազն 1 անգամ:

Կախված սեզոնից կերակրումը իրականացվում է օրական 1-3 անգամ սահմանված նորմերին համապատասխան: Արտադրական ծավալների ավելացման դեպքում կերակրման նորման չի փոխվում: Արտադրական ծավալների ավելացման դեպքում անհրաժեշտ կերի քանակը կհասնի 300-320 տոննայի: Կիրառվող կերը համապատասխանում է ԳՕՍՏ 10385-2014/ Համակցված ձկան կեր տեխնիկական պայմանների պահանջներին, որը արտադրվում է Միացյալ Թագավորությունում՝ «Dragon Feeds» LTD -ի կողմից:

Ընկերությունը որպես բնապահպանական միջոցառում նախատեսում է ջրի մաքրման

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

համակարգ, մեխանիկական մաքրում թմբուկային ֆիլտրերի միջոցով, ինչը արդյունավետ կերպով հեռացնում է ջրից պինդ թափոնները (կերի մնացորդներ, ձկների արտաթորանք և օրգանական մասնիկներ): Մեխանիկական զտման սարքերով կահավորված ավազաններում ջրից ֆիլտրվում են մեխանիկական խառնուրդները, կախութային նյութերը, որոնք նստեցվում են հատուկ տարողությունների մեջ, ինչն էլ այնուհետ ենթակա է լինում ուտիլիզացման: 2 մեխանիկական թմբուկային ֆիլտրերը նախատեսվում են տեղադրել այն ավազաններում, որոնք հոսքով կապված են բոլոր գոյություն ունեցող ավազաններում:

Մաքրված ջուրը վերադաձվում է ընդհանուր համակարգ, ինչը ապահովում է ջրային ռեսուրսի արդյունավետ օգտագործումը:

Գործող ձկնաբուծական տնտեսությունում ձուկը իրացվում է կենդանի վիճակում, արտադրանքի պահեստ, սառնարանային տնտեսություն չի նախատեսվում:

Գնահատման հաշվետվությունում ներկայացված են գործունեության ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունները և այդ ազդեցությունները մեղմացնող նախատեսվող բնապահպանական միջոցառումները, որոնք հետևյալն են՝ մթնոլորտային օդի վրա ազդեցությունները կապված են ձկների կերի, արտաթորանքի և օրգանական նյութերի քայքայումից տհաճ հոտի առաջացմամբ, ինչը կանխելու նպատակով նախատեսվում է յուրաքանչյուր ավազանի ցամաքեցում և մաքրում տարեկան 1 կամ 2 անգամ հաճախականությամբ, տհաճ հոտի առաջացումը կանխելու նպատակով օգտագործվում են մեխանիկական զտման սարքերով կահավորված ավազան, օգտագործվող աէրատորները մեծացնում են ջրում լուծված թթվածնի մակարդակը, ինչը խթանում է աէրոբ բակտերիաների ակտիվությունը, որոնք էլ արագացնում են տհաճ հոտեր առաջացնող օրգանական թափոնների քայքայումը:

Ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները կապված են ջրառի իրականացման և կեղտաջրերի հեռացման հետ: Ջրօգտագործման թույլտվության պայմաններին համապատասխան լճակներում ջուրը շրջանառվելուց հետո դրենաժային համակարգի միջոցով հեռացվում է Լիճք գետ:

Հաշվի առնելով, որ ձկնաբուծարանի տարածքը արդեն իսկ կառուցապատված է և հողային նոր աշխատանքներ չեն նախատեսվում, հողային ռեսուրսների, բուսական և կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցություններ չեն դրսևորվելու:

Ձկնաբուծարանի տարածքում աղմուկի առաջացումը կապված է ջրավազանների ջուրը թթվածնով հագեցնող և ջրի շրջապտույտը ապահովող աէրատորների աշխատանքի հետ, աղմուկի մակարդակը ձկնաբուծարանի մշտական աշխատատեղերով տարածքներում և ազդակիր Լիճք բնակավայրի տարածքում կգտնվի սահմանված նորմերում, ամենամոտ բնակելի տան շրջակայքում աղմուկի մակարդակը կլինի միչև առավելագույնը 41.46 dB:

Համաձայն գնահատման հաշվետվության հնարավոր արտակարգ իրավիճակների, անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում ևս (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուխ, ամպրոպ) նախատեսվում են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Ձկնարդյունաբերական կազմակերպությունում առաջացող թափոնատեսակները հետևյալն են՝ կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի), ներկայումս տարեկան 1.8 տոննայից արտադրական ծավալների ընդլայնման հետևանքով կհասնի մինչև 4 տոննա: Սննդամթերքի արտադրության հոսքաջրերի նստվածք, ձկնաբուծարանի արտադրական ծավալների ընդլայնման հետևանքով թափոնատեսակի ծավալը կհասնի 20 տոննայի՝ ներկա

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

8 տոննայի փոխարեն: Թափոնատեսակների ծավալների և վտանգավորության աստիճանի, ծածկագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է գնահատման հաշվետվությունում:

Ձկնաբուծության ջրավազաններում գոյացող թափոնը՝ կերի ավելցուկից և ձկան արտաթորանքների պինդ զանգվածից գոյացող նստվածքը մոտ 20 տոննա կարող է ծառայել որպես բարձրարժեք պարարտանյութ, որը տրամադրվում է Լիճք բնակավայրի բնակիչներին:

Ձկնաբուծարանի շահագործման աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. կերաբախշման համակարգի վերահսկում,
2. այնպիսի կերաբաշխման համակարգի ներդրում, որը առավելագույնի կհասցնի կերային գործակիցը և նվազագույնի՝ թափոնների գոյացումը,
3. ձկնակերի բաղադրության օպտիմիզացում և ձկնակերի յուրացման աստիճանի բարձրացում, կերի բախշման տեխնոլոգիայի բարելավում:

Գնահատման հաշվետության համաձայն նախատեսվում է իրականացնել նաև եռամսյակային մշտադիտարկումներ և բնապահպանական միջոցառումներ՝ ջրի ելքի չափումներ, ջրի անալիզների իրականացում ջրառի կետերում, լճակներում, Լիճք գետի թափման կետում, այդ թվում նաև Լիճք գետում՝ մինչև ջրի ձկնաբուծարան հասնելը:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել 750000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճքի գործող ձկնաբուծարանի ընդլայնման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Լիճք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացվել են հանրային լսումներ, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Գեղարքունիքի մարզպետարանից, Մարտունու համայնքապետարանից, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ից և ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովից, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, որոնք ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակված տարբերակում:

Ամփոփելով նախագծային փաստաթղթերի և ՇՄԱԳ հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից նախատեսվել են բավարար միջոցառումներ և գործողությունների ծրագիր:

ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման արդյունքում ձկնաբուծարանի ընդլայնման և շահագործման իրականացման արդյունքում հնարավոր օդային և ջրային ավազանների աղտոտվածությունը կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Փորձաքննական պահանջներ

1. Ձկնաբուծարանի շահագործման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական կառավարման պլանի և միջոցառումների ծրագրի իրականացմանը:
2. Ջրօգտագործում և ջրահեռացումը իրականացնել շրջակա միջավայրի նախարարության կողմից տրամադրված N042-25 ջրօգտագործման թույլտվությանը համապատասխան: Ջրառի և էկոլոգիական թողքի կետերում տեղադրել առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարք: Անհրաժեշտ է ապահովել սահմանված բնապահպանական թողքի իրականացումը:
3. Ապահովել ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված Լիճք գետ թափվող կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի չափաքանակները:
4. Ապահովել միջոցառումներ արտակարգ և այլ հնարավոր վթարների դեպքում օտարածին ձկնատեսակների լճում հայտնվելը բացառելու համար, ինչպես նաև ապահովել օգտագործված ջրի լրացուցիչ մաքրումը:
5. Գործունեության տարածքի մոտակայքում ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված «Կարմիր բադ» բադերի ընտանիքին պատկանող թռչնատեսակ հանդիպելու դեպքում նախատեսել պահպանության միջոցառումներ:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԳՈՍ» ՓԲԸ-ի կողմից Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճքի գործող ձկնաբուծարանի ընդլայնման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Նելլի Նասիբյան